Պարույր Սևակ

Ավելորդ անհավատություն

Քո անունո՛վ, Մարիա՛մ,
Քո անունով՝
Այստեղ նահանջում է ձմեռն արագ:
Ամառն առանց հերթի՝
Գարունի՞ց էլ առաջ,
Նպաստով է ապրում՝ քո անունով...
Եվ այստեղ կա մեկը քո անունով:
Ու երդվում եմ ես քեզ՝ քո՛ անունով,
Որ ատում եմ մի քիչ
Եվ սիրում եմ նույնքան
Օտա՛ր այս աղջկան՝ քո անունով:
Նա ինչպե՞ս է ապրում քո՛ անունով.
Ինքը դո՛ւ չես, և նա... քո անունո՞վ:
Ուստի ատում մի քիչ
Ու սիրում եմ նույնքան
Օտա՛ր այս աղջկան քո անունով:
Ես կանչում եմ նրան քո անունով
Ու... տանջում եմ ես ինձ քո՛ անունով,
Իսկ նա իմ տանջանքից չի հասկանում ոչի՛նչ.
Այսքա՛ն անհակացող՝ քո անունո՞վ:
Բայց կանչում եմ նրան քո անունով,

Կանչում այնպես, ինչպես մարդիկ հնում
Կանչում-կոչում էին ոգիներին բարի...
Ոգիդ չի՞ հայտնվում՝ քո՛ անունով:
Ուրեմն աշխարհումըս իրո՞ք չկա
Ու չի՞ լինում իրոք ո՛չ մի ոգի...
Ես ավելորդ անգամ, վա՛տ իմ,
Անհավա՛տ իմ,
Անհավատ եմ դառնում... քո՛ անունով:

20.III.1964թ.
Դիլիջան